մայնքը ժամանակաւորապէս ազատել պարսկական տեղական իշխանութիւններին վճարուող հսկայական ու մաշեցնող հարկերից[1]*։*

Սակայն յետագայ տասնամեակները իրենց հետ բերեցին նոր դժուարութիւններ, խռովուեց ներքին վանական կեանքը, համայնքը թաղուեց պարտքերի ու զանազան այլ խնդիրների մէջ։ Բաւական անյաջող դասաւորուեց նաեւ տեղի հոգեւոր առաջնորդների ու Հռոմից յաճախակի ժամանող կաթոլիկ միսիոներների յարաբերութիւնները։ Վերջիններից շատ քչերին էր որ յաջողւում շահել տեղի հայոց համակրանքը[2]*։*

Այս բոլորը աստիճանաբար յանգեցրեց գաւառի կաթոլիկ բնակչութեան թուի նօսրացման ու, ի վերջոյ, XVIII դարի կէսերից նաեւ համայնքի կենսագործունէութեան դադարեցման։ Վերջնական հարուածը հասցրեցին թուրք-պարսկական շարունակական պատերազմական արշաւները միմեանց դէմ, որոնց մեծ մասը տեղի ունեցաւ Նախիջեւանի տարածքում։ Եթէ դեռ XVII դարի կէսերին աղբիւրները Նախիջեւանում հաշւում էին 5-7000 հայ կաթողիկէներ ապա XVIII դարի սկզբին նրանց թիւն արդէն չէր անցնում մի քանի տասնեակից[3]*։*

---

1 *Օգոստինոս Բաջենցի կեանքի եւ գործունէութեան մասին տե՛ս* **Carlos Alonso.** *Angel Maria Cittadini;* ինչպէս նաեւ **Ambrosius Eszer**. *Ôgostinos Bajenc O.P. als Oberhirte von Naxijewan*, - «Archivum fratrum praedicatorum», vol. XLVII, Roma, 1977, SS. 183-246.

2 *Այս մասին առաւել մանրամասն տե՛ս ստորեւ՝ գրքում։ Նախիջեւանում, ինչպէս նաեւ ողջ Արեւելեան Հայաստանում, Հռոմի ծաւալած միսիոներական գործունէութեան մասին տե՛ս* **Josef Metzler**. *Nicht erfüllte Hoffnungen in Persia*, - «Sacrae Congregatione de Propaganda Fide. Memoria rerum. 1622-1972», Vol. I/1, 1622-1700, Rom-Freiburg-Wien: Herder, 1971, S. 681-706; *Այս մասին եղած գրականութեան բաւական համահաւաք ցանկերը տե՛ս* «Bibliotheca missionum» - *մատենագիտական ցանկերի ժողովածուներում (հատկապէս առաջին, չորրորդ եւ հինգերորդ հատորներում, հրատարակուած 1963-1964 թթ.)*

3 *Այսպիսի եզրակացութեան համար օգտագործուած են գիւղերի բնակչութեան վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններով հարուստ մի քանի կարեւոր փաստաթղթեր։ Դրանք են՝*

1654 թ. - Անտոն Ապրակունեցու զեկոյցը (տե՛ս SC Armeni, vol. 1, f. 13-32, այս փաստաթղթի մէկ այլ պատճէն տե՛ս SOCG, vol. 292, f. 399-402; *տե՛ս նաեւ այս փաստաթղթի համառօտուած, բայց առայժմ միակ հրատարակութիւնը արուած XVII դարում՝* **F. V. M. Fontana.** Constitvtiones, declarationes et ordinationes capitvlorvm generalivm S. Ordinis prædic. Ab anno MCCXX. Vsque ad MDCL